

Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԱՔՐԻՐՆԵՐԸ (1912—1913 Թ. Թ.)

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի կողմից, Հիջրեթի 330—331 թվականին (1912—1913) կազմված և Թուրքական կառավարության են ներկայացված Օսմանյան կայսրության մեջ գտնված վանքերի և եկեղեցիների ցուցակները և նրանց հետ համապատասխան թաքրիրները (ծանուցագրեր)՝ ուղղված արդարադատության և դավանանքների մինիստրության։

Այդ ցուցակներն ու թաքրիրները պահվում են Երևանի հանրային գրադարանի Թուրքերեն գրքերի շարքում 1—47 համարների տակ։ Գրադարանում պահված թաքրիրներն ու ցուցակները Պատրիարքարանի սեպագիր օրինակներն են, ինչպես նշված է ցուցակում, իսկ մաքրագրված օրինակները ներկայացված են կառավարության։

Ցուցակներն ու թաքրիրները բլանկի վրա գրված են և Պատրիարքարանի գրասենյակի կողմից հավաքված Պատրիարքարանի պաշտոնական մեծ թղթածրարում (դժբախտաբար կիսով չափ պատռված)։ Ցուցակների և թաքրիրների վրա կան փոփոխություններ, որոշ տեղերում նաև հայերեն լեզվով ծանոթություններ։

Պատրիարքարանի թղթածրարի վրա թուրքերեն լեզվով գրված է.

«Հայկական եկեղեցիների ցուցակը։ Կոստանդնուպոլսի և այլ վիլայեթների եկեղեցիների ցուցակը։ Արդարադատության մինիստրություն...» (պատռված է)։

Վերոհիշյալ թաքրիրների սեպագրությունները տրված են հետևյալ համարներով.

(Հիջրեթի 330 թ. փետրվար—1911—1912 թ. թ.) № № 1962, 1972, 1973, 1974, 1975, 1976, 1977, 1978, 1979, 1980, 1981, 1982, 1983, 1984, 1985, 1986։

(Հիջրեթի 330 թ. փետրվար—1911—1912 թ. թ.) № № 1987, 1988, 1989, 1920, 1921, 1922, 1993, 1994, 1995, 1998, 1999, 2000, 2001, 2003, 2010, 2015, 2016։

(Հիջրեթի 330 թ. մարտ—1911—1912 թ. թ.) № № 2020, 2021, 2022, 2024, 2029, 2031, 2032։

(Հիջրեթի 331 թ. ապրիլ—1912—1913 թ. թ.) № № 3036, 2047, 2048, 2049, 2050, 2053, 2057, 2058, 2059, 2061։

Թղթածրարում ընդամենը պետք է լինեն 51 թաքրիրներ։ Այդ թաքրիրներից պակասում են հետևյալ համարները. 2000, 2016, 2020 և 2061։

Վերև հիշված թաքրիրներից բացի, կան նաև այլ թաքրիրներ հետևյալ համարներով. 2014, 2067, 2069, 2081, 2082, 2085, 2091,

2092, 2093, 2094, 2095, 2096 (12 թաքրիր. ընդամենը՝ 47+12=59 թաքրիր)։

Թաքրիրների բովանդակությունից երևում է, որ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանը եկեղեցիների և վանքերի մասին տեղեկությունները ստացել է վիլայեթների և քաղաքների հայոց առաջնորդարաններից. հետևաբար կարելի է ընդունել, որ վանքերի և եկեղեցիների ցուցակները վավերական են և եկեղեցիների մասին տրված տեղեկությունները, մասնավորապես նրանց կառուցման թվականները ունեն պատմական ճշտություն։

Ցուցակները ընդգրկում են Օսմանյան պետության մինչև առաջին համաշխարհային պատերազմի ժամանակվա սահմանները, այսինքն ներառյալ Միջագետքը, Սուրիան, Պաղեստինը և այլն։

Մեզ համար անհասկանալի պատճառով ցուցակում չի մտցված Վանի վիլայեթը։

Թաքրիրների բովանդակությունից պարզվում է, որ Թուրքիայի սահմաններում գտնվող բոլոր հայկական (հավանաբար նաև հունական և այլ ազգային փոքրամասնությունների) եկեղեցիները և վանքերը պետք է հաստատված լինեն, թաքրիրների արտահայտությամբ՝ «կապված լինեն» («մերբուր») հատուկ սուլթանական ֆերմանի։ Այդ պատճառով էլ ցուցակում ցույց տրված բոլոր եկեղեցիները և վանքերը բաժանվում են երկու կարգի՝ «ֆերմանով հաստատված» և «առանց ֆերմանի» թույլատրված եկեղեցիներ և վանքեր։ Մինչև 1912—1913 թվականները հայոց եկեղեցիների կարևոր մասը (մեր հաշվով շուրջ 70—75 տոկոսը) հաստատված չեն եղել ֆերմանով։ Հավանաբար, թուրքական կառավարության որոշակի պահանջով, հայոց Պատրիարքարանը ներկայացնում է բոլոր եկեղեցիների և վանքերի լրիվ ցուցակը, միաժամանակ ցույց տալով նրանց վայրերը, անունները, կառուցման թվականները և ֆերմանով հաստատված լինելը կամ չլինելը, ֆերմանով հաստատված լինելու դեպքում՝ նաև ֆերմանի տարեթիվն ու ամսաթիվը։ Մի շարք եկեղեցիների ու վանքերի մասին ասվում է միայն «կառուցված է հնուց»։

Պահպանելու համար Թուրքիայի վարչական բաժանման այդ շրջանին գոյություն ունեցող միավորների անունները, չենք թարգմանել այդ անունները։ Ինչպես հայտնի է, մինչև 1914—1918 թվականների համաշխարհային առաջին պատերազմը, Թուրքիան ուներ հետևյալ վարչական միավորները. վիլայեթ, սանջակ (կամ լիվա), կազա և նահիյե։ Տեղերի, եկեղեցիների և վանքերի անունները գրված լինելով արաբական տառերով, հաճախ դժվար է լինում այդ անունները կարդալ ճշտությամբ (մասնավորապես գյուղական անունները)։ Հնարավորության սահմաններում ստուգել ենք քարտեզներով։ Այն տեղանունները, որոնց ճշտության մասին կասկածել ենք, ցույց ենք տվել հարցական նշանով (?)։ Ինչ վերաբերում է հայոց եկեղեցիների և վանքերի անուններին, դրանք, շատ չնչին բացառությամբ, ճիշտ են արտահայտված։

Թաքրիր բառը (تقرير) պահպանել ենք։ Ինչպես հայտնի է, հայկական և հունական պատրիարքարանների կողմից Բարձրագույն Դռան կամ մինիստրություններին ուղղված պաշտոնական գրությունը կոչվում էր «թաքրիր»։

Ցուցակում հիշված բոլոր եկեղեցիների (ներառյալ վանքերի) ընդհանուր պատկերը տալիս ենք առանձին աղյուսակով, այնպես, ինչպես դասավորված են Պատրիարքարանի թաքրիրներում և ցուցակներում։

Եկեղեցիները և վանքերը ըստ վիլայեթների, սանջաքների և կազաների	Ֆերմանով	Առանց ֆերմանի	Ընդամենը
Ստամբուլում և հարակից վայրերում	31	8	39
Էրզրումի վիլայեթը			
Երզնկա, սանջաք	1	76	77
Քեմախ, սանջաք	—	43	43
Քղի, կազա	—	47	47
Ռիֆահիյե, կազա	1	4	5
Փիլումերի, կազա	—	6	6
Բայբուրդ, կազա	—	57	57
Բիթլիսի վիլայեթը			
Գենջ, սանջաք	—	26	26
Մուշ, սանջաք	—	82	82
Խարբերդի վիլայեթը			
Զարսանջաք, կազա	—	31	31
Զարսանջաք, լրացուցիչ	—	22	22
Դերսիմ, կազա	—	28	28
Էգին, կազա	4	7	11
Էգին, լրացուցիչ	—	17	17
Արաբկիր, կազա	1	2	3
Դիարբեքիրի վիլայեթը			
(Սանջաքներում, կազաներում և նահիյեներում)			
Փալու, կազա	1	37	38

Եկեղեցիները և վանքերը ըստ վիլայեթների, սանջաքների և կազաների	Ֆերմանով	Առանց ֆերմանի	Ընդամենը
Սվազի վիլայեթը			
Կենտրոնում և Հավրիք, Կոկկերի, Ազիզիյե և Բիրուն կազաներում	26	38	64
Քերուն, կազա	5	—	5
Կանդալ, Թենաս և Դարենտի կազաներում	—	22	22
Կարահիսարի-Շարքի, սանջաք	6	34	40
Դիվրիկ, կազա	—	20	20
Քերուն, կազա	—	5	5
Ամասիա, սանջաք	5	7	12
Թոքատ, սանջաք	5	34	39
Տրապիզոնի վիլայեթը և սանջակը			
Կիրասոն, կազա	—	3	3
Ջանիկ, սանջաք	5	38	43
Ջանիկ, լրացուցիչ	—	4	4
Անկարայի վիլայեթը			
Ջորում, կազա	11	34	45
Ասթանա, նահիյե	2	5	7
Նալլու-խան, կազա	—	1	1
Կեսարիայի վիլայեթը	15	33	48
Այդընի (Իզմիրի) վիլայեթը	13	10	23
Իզմիտի սանջակը	14	36	50
Էրմիշե (Արմաշ)	2	—	2
Ադանայում	4	21	25
Մարաշում	3	13	16
Ուրֆայում	2	3	5
Բրուսայում			
Կեմլիք, կազա	3	4	7
Իրիշիք, կազա	4	—	4
Այլ վայրերում	5	6	11
Բոլի սանջակում	3	2	5
Քյոթահիայում	3	4	7
Կոնիայի վիլայեթում	4	1	5
Կաստեմունիի վիլայեթում	2	5	7
Բանդրմա-Բալիքեսերում	1	1	2
Կարահիսարի-Սահիբում	—	1	1
Էդիրնեում	3	1	4
Մուսուլում	1	—	1
Բաղդադում	1	—	1
Բիլեջիքում	5	—	5
Բեյրութում	—	3	3
Այնթապում	1	3	4
Հալեբում	—	9	9
Լրացուցիչ	2	2	4
Անթարիայում	—	7	7
Ընդամենը ցուցակներում՝	197	1073	1270

Ինչպես վերևում հիշեցինք, ցուցակներում չկան Վանի վիլայեթում եղած հայոց եկեղեցիների ու վանքերի ցուցակները։ Հետևաբար այս աղյուսակում բերված գումարը պետք է լրացնել Վանի նահանգի եկեղեցիների և վանքերի թվով։ Նկատի ունենալով, որ Վանի վիլայեթը տներ հոծ հայ ազգաբնակչություն, այդ շրջանում եկեղեցիների ու վանքերի թիվը, պետք է ենթադրել, որ պակաս չէր կարող լինել Էրզրումի վիլայեթում եղած մոտ 250 վանքերից և եկեղեցիներից։

Այսպիսով ստացվում է ավելի քան 1 500 եկեղեցի և վանք։

Կոնստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի պաշտոնական ցուցակների ոչ լրիվ տեղեկություններով, առաջին համաշխարհային պատերազմից առաջ գոյություն ունեցած 1500-ից ավելի եկեղեցիների կարևոր մասը կառուցվել են հետևյալ հայկական և հայաբնակ նահանգներում.

Էրզրումում	77 վանք և եկեղեցի
Մուշում	82 վանք և եկեղեցի
Դիարբեքիրում	108 վանք և եկեղեցի
Սեբաստիայում	89 վանք և եկեղեցի
Ադանայում	25 վանք և եկեղեցի
Տրապիզոնում	63 վանք և եկեղեցի
Ջանիկում (Սամսոնում)	43 վանք և եկեղեցի
Կոստանդնուպոլսում և շրջակայքում	47 վանք և եկեղեցի

Հիմնվելով պաշտոնական գրությունների՝ Պատրիարքարանի թաքրիրների վրա, կարելի է հստակորեն ասել, որ Օսմանյան կառավարությունը ամենախիստ հսկողության տակ է պահել նաև հայկական եկեղեցիներն ու վանքերը։

Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին, 1912—1913 թվականներին, Թուրքիայի բոլոր հայկական վանքերի և եկեղեցիների թվովն ու վիճակը թուրքական կառավարության հատուկ «հետաքրքրությունը» որոշակի կապ է ունեցել արևմտահայության ֆիզիկական ոչնչացման դիվային ծրագրի՝ մեծ եղեռնի ծրագրի հետ։

Մի ամբողջ ժողովրդի նախճիրի ու բնաջնջման հետ ոչնչացվեցին նաև այդ ժողովրդի դարերի ընթացքում ստեղծած տնտեսական, քաղաքակրթական բազմաթիվ և բազմատեսակ արժեքները, հուշարձանները, ինչպես նաև մշակութային այդ արժեքների մասը կազմող վանքերն ու եկեղեցիները։

ՍՏԱՄԲՈՒԼ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գնահատը	Սեպագրության թվականը	Մաքրագրության թվականը
279	1962					1330 թ. փետրվարի 2	1330 թ. փետրվարի 4

Արդարադատության և դավանանքների բարձր մինիստրության

1330 թ. 22 հունվար թվակիր և № 130 արդարադատության և դավանանքների մինիստրության պատասխանն է։ Ստամբուլում և երեք քաղաքներում գտնվող 39 եկեղեցիներից 31-ը կայսերական հրամանով հաստատված, մնացած 8 եկեղեցիները կայսերական հրամանով հաստատված չեն։ Այդ մասին հարկ եղած տեղեկությունները ստացված լինելով, կայսերական հրամանով հաստատված եկեղեցիների անունները և կայսերական հրամանների թվականները, իսկ կայսերական հրամանով չհաստատված եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող ցուցակը երկու օրինակով սրա հետ ներկայացնում ենք Ձեր բարձրությանը և խնդրում ենք, համաձայն կանոնի, հարկ եղած կարգադրությունները անել։

Այդ մասին հրամանն ու ֆերմանը Նորին Վսեմությանն է.

(Հայերենով հավելված)՝

Գրված ՀՍ 1915 թ. փետրվարի 2-ին։

(Սառրագրություն)

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գնահատը	Սեպագրության թվականը	Մաքրագրության թվականը
			Ստամբուլում և երեք քաղաքներում գտնվող և կայսերական հրամանով հաստատված եկեղեցիների անունները, կայսերական հրամանագրերը և թվականները ցուցնող ցուցակ։				

1. Ենի-Քյոյում Մայր Աստվածածին եկեղեցի։ Նորոգումը հաստատված է 1248 թ. ջեմազուլ-էվվելի սկզբին տրված կայսերական ֆերմանով։
2—3. (ջնջված են)։
4. Կանաբա (?) կղզում Ս. Լուսավորիչ եկեղեցի։ Հաստատված է 1270 թ. զիլհիջջե ամսի սկզբում տրված կայսերական հրամանով։
5. Թոփ-Կապուում Ս. Նիկողայոս եկեղեցի։ Նորոգման կայսերական հրամանը տրված է 1247 թ. ռամազան ամսի սկզբին։
6. Բյոյուք-Դերեում Ս. Հռիփսիմե (աղավաղված) եկեղեցին։ Նորոգման մասին 1311 թ. ջեմազ-ուլ-էվվելի 22-ի կայսերական ֆերմանը ստացված է։
7. Ռումելի-Հիսարում Ս. Սանդուխտ եկեղեցին։ Այս եկեղեցու զանգակատան նորից կառուցման մասին 1939 թ. մուհարրեմ 5 թվակիր... (պակաս է)։
8. Էյուբում Ս. Եղիա եկեղեցին, 1247 թ. շեվվալի սկզբում... (պակաս է)։
9. (ջնջված է)։
10. Սկյուդարում, Ենի-Մահալեում Ս. Կարապետ եկեղեցին։ Նորոգման մասին երկու հրաման կա—1141 թ. սեֆեր ամսի վերջին և 1140 թ. սեֆեր ամսի կեսին։
11. (ջնջված է)։
12. Կանդիլլիում Ս. Առաքելոց եկեղեցին։ Նորոգման մասին 1310 թ. մուհարրեմ ամսի 6-ի կայսերական ֆերմանը ստացված է։
13. Եդի-Կուլեում հիվանդանոցի եկեղեցին։ Այս եկեղեցին գտնվում է հիվանդանոցի այգում։ Եկեղեցու և հիվանդանոցի կա-



Կոստանդնուպոլսի հայոց եկեղեցիների մի մասի ցուցակը՝ վայրերի ու կառուցման թվականների նշումով:

ռուցման մասին կա կայսերական ֆերման 620 զիլկադի ամսի 7-ին:

14. Կասըմ-Փաշայում Ս. Հակոբ եկեղեցին: Նորոգման և կառուցման մասին ֆերման ստացված է 1271 թ. մուհարրեմ ամսի վերջին:
15. Կում-Կափուում Պատրիարքարանի եկեղեցին: Նորոգման մասին կայսերական ֆերման շնորհված է 1291 թ. ռեբի-ուլ-էվվելի 23-ին:
16. Օրթա-Քյոյում Ս. Աստվածածին եկեղեցին: Այս եկեղեցում վարդապետների ապրելու համար երկու սենյակի կառուցման մասին 1282 թ. սեֆեր ամսի կեսի թվականով կայսերական ֆերմանը ստացված է:
17. (ջնջված է):
18. Բեյօղլուում (Բերա) Ս. Երրորդություն եկեղեցին: Նորոգման մասին 1251 թ. ռեբի-ուլ-ախիրի սկզբի թվակիր կայսերական ֆերմանը ստացված է:
19. Բեյօղլուում Ս. Հարություն եկեղեցին: Սույն եկեղեցու և նրան կից աղջկանց և տղայոց դպրոցի կառուցման մասին 1210 թ. զիլգադե ամսի 17-ի թվակիր ֆերմանը ստացված է:
20. (ջնջված է):
21. Սկյուդարում, Սելամսըզում Ս. Խաչ եկեղեցին: 1245 թ. զիլգադեի կեսի թվակիր ֆերմանը կա:
22. (ջնջված է):
23. Ֆերի-Քյոյում Ս. Վարդան եկեղեցին: Այս եկեղեցին առանձին կայսերական ֆերմանով հաստատված չէ, միայն հիշյալ գյուղում մի վարդապետի բնակվելու մասին 1277 թ. սեֆեր ամսի 1-ին կայսերական ֆերման կա...
24. Կուզկունջուքում Ս. Լուսավորիչ եկեղեցին: Երեք ֆերմանով հաստատված է՝ 1250 թ. շեվվալ ամսի սկզբին, 1277 թ. շաբան ամսի կեսին, 1291 թ. ջեմազուլ-էվվելի 3-ին:
25. (ջնջված է):
26. Մաքրի-Քյոյում Ս. Աստվածածին եկեղեցին: Նորոգման մասին 1263 թ. շաբան ամսին ֆերմանը ստացված է:
27. Սամաթիայում, Ալթը-Մերմերում Ս. Հակոբ եկեղեցին: Նորից կառուցվելու մասին 1274 թ... կայսերական ֆերմանը տրված է:
28. Սան-Ստեֆանոսում Ս. Ստեփանոսի եկեղեցին: 1259 թ. ջեմազ-ուլ-էվվելի կեսի ֆերմանով հաստատված է:
29. Կարթալում Ս. Նշան եկեղեցին: Հաստատված է 1273 թ. սեֆեր ամսի վերջի կայսերական ֆերմանով:
30. Բեշիք-Թաշում Ս. Աստվածածին եկեղեցին: Նորոգման մասին ֆերմանը 1254 թ. 15... (սրակաս է):
31. Կադի-Քյոյում Ս. Թադավոր եկեղեցին: Նորոգման մասին 1229 թ. ջեմազ-ուլ-էվվելի վերջում կայսերական ֆերման կա: Կառուցման մասին 1273 թ. ...ամսի վերջին ֆերման կա:
32. Խաս-Քյոյում Ս. Ստեփանոս եկեղեցին: Նորոգման մասին ֆերման կա 1246 թ. ջեմազ-ուլ-էվվելի սկզբին:
33. Սամաթիայում Ս. Գևորգ եկեղեցին: Նորից կառուցվելու մասին կայսերական ֆերմանը 1302 թ. զիլգադեի սկզբին:
34. Ենի-Կափուում Ս. Թադեոս-Բարթողիմեոսի եկեղեցին: 1262 թ. սեֆերի սկզբի թվակիր ֆերմանը ստացված է:
35. Ղալաթայում Ս. Լուսավորիչ եկեղեցին: Երեք ֆերման կա—1145 թ. շաբանի կեսին, 1133 թ. ռեբի-ուլ-էվվելի վերջին, 1140 թ. զիլհիջջե ամսի վերջին:
36. Կուրու-Չեշմեում Երման Ս. Խաչ եկեղեցին: Ֆերմանը՝ 1249 թ. ջեմազ-ուլ-էվվելի սկզբին:

37. Բոյաջի-Քյոյում Ս. Երից Մանկանց եկեղեցին։ Ֆերմանը 1301 թ. ռեբի-ուլ-էվվելի 19-ին։
38. Պալաթում Ս. Հրեշտակապետ եկեղեցին։ Նորոգման մասին 1104 թ. սեֆեր ամսի կեսին և 1104 թ. ջեմազ-ուլ-էվվելի կեսին երկու ֆերման կա։
39. Էյուբում Ս. Աստվածածին եկեղեցին։ Նորոգման ֆերմանը 1256 թ.[1]։

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սեպագրության թվականը	Մաքրագրության թվականը
			Ստամբուլում և երեք քաղաքներում գտնվող կայսերական ֆերմանով չհաստատված եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող ցուցակ։				

1. Բողազ-Իչիում (Բոսֆոր), Իսթենիյեում Ս. Հովհաննես եկեղեցին, 1203 թ.։
2. Բեյբոզում, Ս. Նիկողայոս եկեղեցին, 1250 թ.։
3. Մաքրի-Քյոյ կազայում, Մյուզաֆ Ազերլի գյուղի եկեղեցին, 1251 թ.։
4. Կարթալի կազայում, Ալեմ-Դաղի հայկական գյուղում, Ս. Նշան եկեղեցին, 1251 թ.։
5. Կեդիք-Փաշայում, Ս. Հովհաննես եկեղեցին, 1292 թ.։
6. Բեյօղլուում (Բերա), Բանկալթիի հայկական գերեզմանատան Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1281 թ.։
7. Նարլը-Կափուում Ս. Հովհաննես եկեղեցին, 1223 թ.։
8. Կում-Կափուից դուրս Ս. Հարություն եկեղեցին, 1274 թ.։

ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սեպագրության թվականը	Մաքրագրության թվականը
381	2020					1330 թ. փետրվարի 28	1330 թ. փետրվարի 28

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Երզնկայի սանջաքում գտնվող Ս. Փրկիչ եկեղեցին 1262 թ. վերջերին կայսերական հրամանով հաստատված լինելով, վերոհիշյալ լիվայում և նրան հարակից գյուղերում գտնվող կայսերական հրամանով չհաստատված 76 եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն օրենքի, Ձեր անհրաժեշտ կարգադրությունը։

[1] Պարզվում է, որ սույն ցուցակից ջնջված եկեղեցիների մասին կազմված է առանձին ցուցակ, որովհետև այդ 8 (ջնջված) եկեղեցիները կայսերական ֆերմանով հաստատված չեն, որով այս ցուցակում մնում է 31 եկեղեցի, ինչպես նշված է պաշտոնական գրության մեջ։

ԵՐԶՆԿԱ

Ֆերմանով առանց ֆերմանի
1 76

Կցված է 1330 թ. փետրվարի 28-ի № 2020 թաքրիրին։

Ֆերմանի թ. կառուցման թ.

1. Բուն Երզնկայում գտնվող Ս. Նշան եկեղեցին, 1250 թ.։
2. Բուն Երզնկայում գտնվող Ս. Երրորդություն եկեղեցին, 1252 թ.։
3. (ջնջված է)։
4. Բուն Երզնկայում գտնվող Ս. Սարգիս եկեղեցին, 1255 թ.։
5. Բուն Երզնկայում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին, 1305 թ.։
6. Երզնկայի սանջաքի Միթենի գյուղում, Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։
7. Երզնկայի սանջաքի Խեյրեթեբ գյուղում, Ս. Լուսավորիչ եկեղեցին, հնուց։
8. Երզնկայի սանջաքի Ախուրջուխ գյուղում, Ս. Մինաս եկեղեցին, հնուց։
9. Երզնկայի սանջաքի Ս. Օհան գյուղում, Ս. Օհան եկեղեցին, հնուց։
10. Երզնկայի սանջաքի Միթենի գյուղում, Ս. Եղիա եկեղեցին, հնուց։



Էրզրումի վիլայեթի Քեմախ գավառի հայոց եկեղեցիների մի մասի ցուցակը։

11. Երզնկայի սանջաքի Միթենի գյուղում, Ս. Խաչ եկեղեցին, հնուց։
12. Երզնկայի սանջաքի Գյոլչեքեն Փալանգա (?) գյուղում, Ս. Հռիփսիմեի եկեղեցին, հնուց։
13. Երզնկայի սանջաքի Ղարմրի գյուղում, Ս. Գևորգ եկեղեցին, 1277 թ.։
14. Երզնկայի սանջաքի Ղարմրի գյուղում, Ս. Օգսենտիոս վանքի եկեղեցին, հնուց։
15. Երզնկայի սանջաքի Գյուլլեջի գյուղում, Ս. Գևորգ եկեղեցին, 1256 թ.։
16. Երզնկայի սանջաքի Գյուլլեջի գյուղի մոտ, Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց։
17. Երզնկայի սանջաքի Գյուլլեջի գյուղի մոտ, Ս. Թորոս եկեղեցին, հնուց։
18. Երզնկայի սանջաքի Գյուլլեջի գյուղին մոտ, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
19. Երզնկայի սանջաքի Մահմուդլու գյուղում, Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց։
20. Երզնկայի սանջաքի Մահմուդլու գյուղի մոտ, Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց։
21. Երզնկայի սանջաքի Փիզվան գյուղում, Ս. Նշան եկեղեցին, 1289 թ.։
22. Երզնկայի սանջաքի Փիզվան գյուղի մոտ, Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
23. Երզնկայի սանջաքի Կարադիքին գյուղում, Ս. Հրեշտակապետ եկեղեցին, 1255 թ.։
24. Երզնկայի սանջաքի Վերին Չիֆթլիք գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
25. Երզնկայի սանջաքի Ստորին Չիֆթլիք գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
26. Երզնկայի սանջաքի Կարա-Քիլիսե գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
27. Երզնկայի սանջաքի Աքչե-քենդ գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
28. Երզնկայի սանջաքի Փիթարիջ գյուղում, Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։
29. Երզնկայի սանջաքի Խնձորի գյուղում, Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց։
30. Երզնկայի սանջաքի Շխիլի գյուղում, Ս. Խաչ եկեղեցին, հնուց։
31. Երզնկայի սանջաքի Մեղուսիկ գյուղում, Ս. Նշան եկեղեցին, 1261 թ.։
32. Երզնկայի սանջաքի Մեղուսիկ գյուղում, Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
33. Երզնկայի սանջաքի Կարա-Թուս գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
34. Երզնկայի սանջաքի Բյոյուք-Էքրեք գյուղում, Ս. Գևորգ եկեղեցին, 1245 թ.։
35. Երզնկայի սանջաքի Զաթ գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, 1275 թ.։
36. Երզնկայի սանջաքի Մոնլու գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, 1275 թ.։

37. Երզնկայի սանջաքի Ռում-էքրեք գյուղում, Ս. Կիրակոս եկեղեցին, 1245 թ.։
38. Երզնկայի սանջաքի Էրքան գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, 1274 թ.։
39. Երզնկայի սանջաքի Գյուլնեսիք գյուղում, Ս. Թադեոս եկեղեցին, հնուց։
40. Երզնկայի սանջաքի Գյուլնեսիք գյուղի մոտ, Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։
41. Երզնկայի սանջաքի Դաշրաք գյուղում, Ս. Աստվածածին եկեղեցին, 1235 թ.։
42. Երզնկայի սանջաքի Ս. Լուսավորչի Զարշարանաց վանքում գտնվող հայոց եկեղեցին, հնուց։
43. Երզնկայի սանջաքի Զորս գանձ վանքում[2] հայոց եկեղեցին, հնուց։
44. Երզնկայի սանջաքի Ս. Գևորգ վանքում, Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
45. Երզնկայի սանջաքի Ս. Ներսես Հայրապետի վանքում, հայոց եկեղեցին, հնուց։
46. Երզնկայի սանջաքի Ս. Կիրակոս վանքում, հայոց եկեղեցին, հնուց։
47. Երզնկայի սանջաքի Ս. Հակոբ Մծբնա հայրապետի վանքում, հայոց եկեղեցին, հնուց։
48. Երզնկայի սանջաքի Ս. Շողակաթ վանքում, հայոց եկեղեցին, հնուց։
49. Երզնկայի սանջաքի Միամոր Ս. Կարապետ վանքի եկեղեցին, հնուց։
50. Երզնկայի սանջաքի Ս. Պողոս-Պետրոս վանքի հայոց եկեղեցին, հնուց։
51. Երզնկայի սանջաքի Ս. Նիկողայոս վանքի հայոց եկեղեցին, հնուց։
52. Երզնկայի սանջաքի Սըրբքլի (?) Ս. Թորոս վանքի հայոց եկեղեցին, հնուց։
53. Երզնկայի սանջաքի Ս. Թադէոս առաքյալի վանքի հայոց եկեղեցին, հնուց։
54. Երզնկայի սանջաքի Խնդրակատար Ս. Աստվածածին վանքի եկեղեցին, հնուց։
55. Երզնկայի սանջաքի Ս. Թադեոս Առաքյալի վանքի եկեղեցին, հնուց։
56. Երզնկայի սանջաքի Ս. Աստվածածին վանքի եկեղեցին, հնուց։
57. Երզնկայի սանջաքի Օրի գյուղում, Ս. Մինաս եկեղեցին, հնուց։
58. Երզնկայի սանջաքի Օրի գյուղում, Ս. Թորոս եկեղեցին, հնուց։
59. Երզնկայի սանջաքի Ս. Գևորգ վանքի հայոց եկեղեցին, հնուց։
60. Երզնկայի սանջաքի Քիլիջի գյուղի Ս. Թորոս եկեղեցին, հնուց։
61. Երզնկայի սանջաքի Կոմքիզ գյուղի Ս. Բարթողիմեոս եկեղեցին, հնուց։
62. Երզնկայի սանջաքի Կոմքիզ գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, հնուց։
63. Երզնկայի սանջաքի Թիլ գյուղի Ջուխտակ Հայրապետ (?) վանքում գտնվող հայոց եկեղեցին, հնուց։
64. Երզնկայի սանջաքի Ս. Քառասուն Մանկունք եկեղեցին, հնուց։
65. Երզնկայի սանջաքի Ռում-էքրեք գյուղի Ս. Անարծաթ վանքի հայոց եկեղեցին, հնուց։
66. Երզնկայի սանջաքի Մահսուդլի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
67. Երզնկայի սանջաքի Միթենի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
68. Երզնկայի սանջաքի Դինքերթեք գյուղի Ս. Գրիգոր եկեղեցին, հնուց։
69. Երզնկայի սանջաքի Փալանգա գյուղի Ս. Գայանե վանքի հայոց եկեղեցին, հնուց։
70. Երզնկայի սանջաքի Ս. Քրիստափոր վանքի հայոց եկեղեցին, հնուց։
71. Երզնկայի սանջաքի Ս. Ստեփանոս վանքի հայոց եկեղեցին, հնուց։
72. Երզնկայի սանջաքի Ս. Մինաս վանքի հայոց եկեղեցին, հնուց։
73. Երզնկայի սանջաքի Փեզվան գյուղի Ս. Եղիա վանքի հայոց եկեղեցին, հնուց։
74. Երզնկայի սանջաքի Էրզան գյուղի Ս. Կարապետ վանքի եկեղեցին, հնուց։
75. Երզնկայի սանջաքի Թիլ գյուղի Ս. Կաթողիկե եկեղեցին, հնուց։
76. Երզնկայի սանջաքի Կալեջիք գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, հնուց։
77. Երզնկայի սանջաքի Խեզութի գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։

(Շարունակելի)

[2] 43—56 համարներում «վանք» բառը գրված է հայերեն։